ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2019թ. փետրվարի 8-ի նիստի

Ներկա էին գիտական խորհրդի 68 անդամներից 61-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ամբիոններում:

Զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ Հ.Ղազարյան, Հ.Խաչատրյան, Ջ.Գևորգյան, Վ.Ալեքսանյան, Ա.Ոսկանյան, Լ.Նուրբեկյան:

2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ Ագրոբիզնեսի կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Ղազարյանին, Տվյալագիտության ամբիոնի վարիչ տնտեսագիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Խաչատրյանին, Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ տնտեսագիտությունների թեկնածու, դոցենտ Ջ.Գևորգյանին, Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ տնտեսագիտությունների թեկնածու, դոցենտ Վ.Ալեքսանյանին, Ագրարային քաղաքագիտության և խորհրդատվության ամբիոնի վարիչ տնտեսագիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ոսկանյանին և Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ տնտեսագիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Նուրբեկյանին, որոնք ներկայացրեցին համապատասխանորեն իրենց ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիչակը և մի շարք խնդիրներ և առաջարկություններ, որոնք կնպաստեն աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպելուն:

Լսեցին՝ Ագրոբիզնեսի կառավարման ամբիոնի վարիչ, Հ.Ղազարյանը նշեց, որ ելնելով

հանրապետության կրթության ոլորտում ստեղծված անմխիթար իրավիճակից, միանգամայն արդարացված են համալսարանում սկսված արմատական փոփոխությունները:

Արտահայտվեցին՝ Ռեկտոր Վ.Ուռուտյանը նշեց առարկայական պլանների վերանայման, արդիականացման, առարկաների օպտիմալացման, գրավչության, մասնագիտությունների խոշորացման անհրաժեշտության մասին: Արձանագրեց, որ ուսանողները չեն տիրապետում տարական համակարգչային հմտություններին: Ուսանողներին պետք է տալ գործիքակազմ: Արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների հետ կապված առաջարկվեց օրագրերը հանել իսկ հաշվետվությունները թողնել: Խոսվեց նաև տարբեր ստորաբաժանումների կոորդինացված համագործակցության անհրաժեշտության մասին:

Ամփոփեց նախորդ ելույթները Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Է.Ղազարյանը:

Նա տեղեկացրեց, որ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կազմում ներարված են 6 ամբիոններ, որից 5-ը թողարկող ամբիոններ են: Ֆակուլտետի դեկանատն իրականացնում է ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներ 13 մասնագիտությունների ուղղությամբ՝ բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում: Պրոֆեսոր Է.Ղազարյանը նշեց, որ համաձայն է տիկին Ջ.Գևորգյանի այն դիրքորոշմանը, որ տարեցտարի ավելանում է համատեղությամբ աշխատողների թվաքանակը (ֆակուլտետի դասախոսների 1/3), որը նպատակահարմար չէ, քանզի ուսանողները զրկվում են դասախոսների հետ անհատական աշխատանքներ կատարելուց:

Ամբիոնների աշխատանքներում թերություններից մատնանշվեց դասախոսների ծանրաբեռնվածության ոչ համաչափ բաշխումը, որը իսպառ պետք է վերացնել և սահմանել ծանրաբեռնվածության բաշխման կանոնակարգային պահանջների կատարում:

Նշվեց նաև ուսումնական պլանների վերանայման անհրաժեշտությունը, արդիականացման և դրանց համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

Լսեցին՝ ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Ա.Հակոբյանը ներկայացրեց գիտական խորհրդի հաստատմանը Վանաձորի մասնաճյուղի ուսումնամեթոդական խորհրդի որոշումը քոլեջի առկա ուսուցման «Անտառային և անտառապուրակային տնտեսություն» մասնագիտության ուսումնական պլանը (մասնագիտության ծածկագիրը 08210105):

Որոշեցին՝ Հաստատել Վանաձորի մասնաճյուղի քոլեջի առկա ուսուցման «Անտառային և անտառապուրակային տնտեսություն» մասնագիտության ուսումնական պլանը:

Լսեցին՝ Հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի պաշտոնակատար Հարություն Հարությունյանը ներկայացրաց հեռակա ուսուցման դեպարտամենտում բաց թողնված ուսումնական պարապմունքներն անհատական կարգով լրացնելու և ստուգողական աշխատանքների կարգում փոփոխություններ կատարելու հարցը:

Նա նշեց, որ կա անհրաժեշտություն կատարել կանոնակարգային փոփոխություններ և ներկայացրեց հետևյալ առաջարկությունները՝

1. Ստուգողական աշխատանքները դիտարկել, որպես ինքնուրույն աշխատանք և տվյալ առարկայի կրեդիտային համակարգով գնահատման բաղադրիչ:
2. Բաց թողնված ուսումնական պարապմունքներն անհատական կարգով լրացումները իրականացնել դասընթացի տեսքով, որի համար դասախոսները կվճարվեն: Կանչի ընթացքում յուրաքանչյուր առարկայից 30%-ից ավելի բացակայությունները ենթակա են պարտադիր լրացման՝ վճարովի հիմունքներով:

Որոշեցին՝ Հաստատել Հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի պաշտոնակատար Հ.Հարությունյանի ներկայացրած կանոնակարգային փոփոխությունները՝

1. Ստուգողական աշխատանքները դիտարկել որպես ինքնուրույն աշխատանք և տվյալ առարկայի կրեդիտային համակարգով գնահատման բաղադրիչ:
2. Բաց թողնված ուսումնական պարապմունքներն անհատական կարգով լրացումները իրականացնել դասընթացի տեսքով, որի համար դասախոսները կվճարվեն: Կանչի ընթացքում յուրաքանչյուր առարկայից 30%-ից ավելի բացակայությունները ենթակա են պարտադիր լրացման՝ վճարովի հիմունքներով:

Լսեցին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանը ներկայացրեց գիտական խորհրդի հաստատմանը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգերը:

Որոշեցին՝ Հաստատել ներկայացված «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգերը:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան